



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

« 25 » 09 2018թ.  
ՊԿ/ՏԻՐ - 1513

ՀՀ կրթության և գիտության նախարար  
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

## Հարգելի պարոն Հարությունյան

Վարչապետի հանձնարարականի և Վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 02/16.2/31555-18 գրության համաձայն ՀՀ պաշտպանության նախարարությունում կրկին անգամ քննարկվել է ՀՀ կառավարության 2016թ. հունվարի 14-ի N 1-Ա որոշմամբ Հրանտ Սարգսի Ղարիբյանին տրված տարկետման ժամկետը մինչև վերջինիս ուսումնառության ժամկետի ավարտը երկարաձգելու հարցը, որի արդյունքներով հայտնում եմ, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 4-րդ և 8-րդ մասերի իրավակարգավորումների համաձայն՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասը գործում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ և ուժը կորցրած է ճանաչվում 2021 թվականի հունվարի 1-ից: «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն՝ պետական պատվերով պետական գիտակրթական համակարգի, միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերով օտարերկրյա պետությունների կամ սույն օրենքի 16-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքում ասպիրանտուրայում սովորողներին, ինչպես նաև արդարադատության ակադեմիայի ունկնդիրներին տարկետում տրվում է մինչև ուսման ավարտը: Եթե նշված անձինք ուսումնառություն են 27 տարեկանից բարձր տարիքում, ապա պարտադիր զինվորական ծառայության են կանչվում ասպիրանտուրայում սովորողներին՝


32937/16  
ՈՒ ՃԻՐԱԳՐ  
26.09.2018  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Տվյալ պարագայում Հ. Ղարիբջանին ասպիրանտուրայում ուսումնառության համար տարկետումը ՀՀ կառավարության 14.01.2016թ. N 1-Ա որոշմամբ տրվել է՝ հիմք ընդունելով «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը, որը ՀՀ կառավարությանն իրավասություն էր վերապահում իր որոշմամբ քաղաքացիների կատեգորիաների կամ առանձին քաղաքացիների տրամադրել տարկետում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից: Միաժամանակ, «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածն ուժը կորցրած է ճանաչվել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ 2017 թվականի դեկտեմբերի 16-ից, իսկ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով ՀՀ կառավարությանն իրավասություն է վերապահել քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տրամադրել տարկետում՝ բացառապես քաղաքացու կողմից գիտության, կրթության, մշակույթի, արվեստի կամ սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումների համար՝ համապատասխանաբար ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N 451-Ն, 457-Ն և 450-Ն որոշումներով սահմանված կարգով:

Վերոգրյալը նկատի ունենալով գտնում ենք, որ խնդիրը ենթակա է քննարկման նաև ՀՀ արդարադատության նախարարության հետ, որի արդյունքներով՝ եթե վերջինիս կողմից իրավաչափ համարվի «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա ՀՀ կառավարության որոշմամբ Հ. Ղարիբջանի տարկետման ժամկետի երկարաձգումը, ապա ՀՀ պաշտպանության նախարարությունը չի առարկում ներկայացված ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմանը:

**Հարգանքով՝**

Կատ Ս Միմոնյան  
հեռ 294-633



**Դ. ՏՈՆՈՅԱՆ**